

2. Տիկին Աննա Աթամալեան իւր ամուսին Միրզա Աթամալեանի յիշատակի համար մի որդեգիր, որ է Գեղամիան Վարդգէս Բագուեցի:

3. Տիկին Շողակաթ Մելիքեան իւր անունով մի որդեգիր, որ է Վէրիլեան Անդրէաս Բագուեցի:

4. Պ. Նիկողայոս Իզմիրեանի անունով մի որդեգիր, որ է Մխիթարեան Խաչատուր Աղլարցի:

5. Պ. Դաւիթ Ժամհարեան իւր անունով մի որդեգիր, որ է Իշխանեան Բախշի-Գրիգոր Խանձբեցի:

և 6. Բագուի Մարգարեանի ընկերութիւնը պահում է մի որդեգիր, որ է Նզիա Տէր Յովհաննիսեան Բագուեցի:

Բացի այս Ճեմարանիս Մանկավարժական Խորհուրդը զանազան կտակաւանութիւնների հիման վերայ ընտրեց հետեւեալ որդեգրներին.

ա. Բարեյիշատակ բժիշկ Դէորդ Տիգրանեանի անունով երեք որդեգիր, որոնք են Խաչրեան Յակովբ Մեծ Սալացի, Բիւրղեան Նիկողայոս Աքբիրմանցի և Փսերեան Նզիազար Աղլարցի:

ը. Բարեյիշատակ Թումայեան ամուսնոց անունով մի որդեգիր, որ է Սարգսեան Գեղամ Շուշեցի:

զ. Բարեյիշատակ Դէորդ Լալայեանի անունով մի որդեգիր, որ է Մուրադեան Սահակ Մաղրասեցի:

և դ. Բարեյիշատակ Մինաս Մելիքեանցի անունով քստ անօրինութեան նորա Բարեպաշտուհի այրւոյ Տիկին Շողակաթ Աղաջանեան Մելիքեանցի Բագուեցւոյ՝ մի որդեգիր, որ է Տէր Դէորդեան Սուլթան Շիկահոյցի:

Մանապէս ընտրութեամբ Մանկավարժական Խորհրդոյ և ծայրագոյն բարեհաճութեամբ Վեհափառ Ս. Հայրապետի ուղարկուած են բարձրագոյն ուսմանց մէջ կատարելագործուելու՝ ա. Ճեմարանիս ընթացաւարտ սան Շնորհ. Մուշեղ սարկաւազ Տէր Դարբիշեանն ուղարկուած է Կիւլի ս. Վլա-

դիմիր համալսարանն իրրե որդեգիր բարեյիշատակ Դէորդ Փրիգոնեանցի:

ը. Ճեմարանիս ընթացաւարտ սան Երիշ. սարկաւազուհք Սմբատ Տէր Աւետիսեան և Պօղոս Զուրարեան ուղարկուած են նոյն համալսարանն իրրե որդեգիր Բարեյիշատակ Դրիգոր Թումայեանի:

զ. Ճեմարանիս ընթացաւարտ սան Բարեշնորհ Մամբէ վարդապետ ուղարկուած է նոյն համալսարանն իրրե որդեգիր բարեյիշատակ Յովակիմ Աղամեանի:

Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք .

Խառն Ժողովը գումարուեցաւ 5 փետր. Ղաւթիմիոյ Խորհրդարանը նախագահութեամբ Ս. Պատրիարք Էօր և ատենապետութեամբ Տատեան Յարութիւն փաշայի:

1. Ժողովը նկատողութեան առաւ Իզմիրի գաւառային ընդ ժողովին տեղեկագիրը, որով Տ. Մելիքիսեղեկ Սրբազանի նոյն վիճակին Առաջնորդ ընտրուած ըլլալը ծանուցուած էր, և կատարուած ընտրութիւնը օրինաւոր գտնելով, հաստատեց զայն և որոշեց կատարել հարկ եղած պաշտօնական գործողութիւնները:

2. Տ. Ներսէս եպիսկ. Ասլանեան Վանայ մէջ իրեն յանձնուած պաշտօնին նկատմամբ կարգ մը դիտողութիւններ ներկայացնելով, հրաժարական տուած էր, ժողովը նկատողութեան առաւ զդիտողութիւնները և շնորհունելով անոր հրաժարականը, Ս. Նախագահին յանձնեց ի գործ գնել պէտք եղածը, որպէս զի առաջն. տեղապահը օր առաջ մեկնի իւր պաշտօնատեղին:

3. Էնկիւրիի առաջն. տեղապահ Տ. Տաճատ Վ. Ոսկանեան և գաւառային վարչութիւնը, տեղւոյն վիճակային գործերուն նկատմամբ զանազան գրութիւններ ուղղած էին Պատրիարքարան, ժողովը այդ գրութիւններուն պարունակութեանը տեղեկանալէ ետքը, հարկ դատեց Տ. Տաճատ վարդապետէն մանրամասն տեղեկութիւններ ստանալ նոյն խնդիրներուն նկատմամբ և որոշեց Պոլիս հրաւիրել զայն՝ անձամբ յայտնելու համար իր տեղեկութիւնները:

4. Քրիի գաւառային վարչութեան առաջարկութեան վրայ, ժողովը անջատեց նոյն վիճակին հովուութիւնը Էրզրումի առաջնորդութեանէն:

5. Եղիպտոսի գաւառ. վարչութեան խնդրանաց համաձայն, Ժողովը որոշեց Առաջնորդական խոր ընտրութեան հրահանգ ղրկել:

6. Վարչական նախորդ անօրինութեամբ մը, 2մշկածագի հովուութիւնը յանձնուած էր 2արսանձագի առաջն. Տեղապահին, Ժողովը նկատելով որ 2մշկածագի վիճակին մէջ առանձին հովուի մը ներկայութիւնը կարեւոր է, Տ. Կորիւն Վ. Էփլ-տիրհէմանը առաջն. տեղապահ կարգեց 2մշկածագի վիճակին:

— Թօքատէն փետր. 10 թուականով հասած հաւաստի տեղեկութիւններէ կիմանանք թէ Մկրտչական Պատուելի մը ւանդուսալի յաջողութեամբ սկսած է իր փարսիւր քաշել բաղմամբիւ Հայեր: Թօքատի առաջնորդարանէն պաշտօնապէս գիմում եղած է Սըվազի առաջնորդ Տ. Պետրոս արքեպիսկոպոսին և փութամակի վարդապետ մը կամ քահանայ մը խնդրուած է՝ դաւանափոխական տխուր հետեւներէն առաջքը առնելու համար: Առաջնորդ Սրբազանը որոշեց է առ այժմ՝ հոն ղրկել Տ. Գրիգոր քահանայ Զաքարեանը՝ իրրեքարողի:

— Երկրագործական Դրամատան վարչական խորհուրդին նախագահ Վանմ. Նուրեան էֆէնտիի առաջարկութիւնը՝ ի մասին Վանայ կարօտեալներու ցանքին համար յիշեալ Դրամատունէն ըլլալիք 2000 ոսկիի փոխառութեան, Ս. Պատրիարք Հօր և Ազգ. Վարչութեան կողմէ գոհունակութեամբ ընդունուած է: Հետեւաբար, ձեռնհաս մարմնին կողմէ հեռագրուեցաւ Վանայ կուսակալութեան որպէս զի, առանց ըստ օրինի հոգիւր աւանդ պահանջուելու, հարկ եղած գումարները փոխ տրուին գեղացիներուն:

— Վանայ Ասրկառ գաւառակի Թաղական Խորհուրդը յայտնելով Պատրիարքարանի թէ տեղւոյն ազգայինները յետին ծայր չքաւորութեան և աւուր հացի կարօտ վիճակի մէջ կը գտնուին, անմիջական օգնութիւն մը խնդրած է:

— Վանէն, Բալուէն, Սղերգէն Պատրիարքարան հասած նամակներ նոյն տեղերու ազգայնոց չքաւոր վիճակը յայտագրելով, դրամական օգնութիւն կը խնդրեն ստիպողաբար:

— 7 փետր. Վանայ առաջնորդական Տեղապահ Տ. Ստեփան վարդապետ Աղաղատեանի կողմէ Ս. Պատրիարք Հօր ուղղուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Վանայ մէջ և շրջականները Աթոռիկութիւն ընդունող Հայերը սկսած են վերադառնալ մայրենի Եկեղեցւոյ գիրկը:

Ս. Պատրիարք Հայրը փութաց հեռագրով պատասխանել այս հեռագրին, իր հայրական գոհունակութիւնը յայտնելով:

— Վանէ ստացած թղթակցութիւնէ կիմանանք թէ Բաղերայք շատ խորամանկութեամբ վարուած

են նպատակ թաշխուժի գործին մէջ, Կարօտելոց համար իրենք ալ Ամերիկացիներուն և Անգլիացիներուն հետ միեւնոյն առեն հանդանակութիւն կատարած էին, բայց երբ իրենց բողոքական մրցակիցները գրամ, ուսեստ, սերմ և կենդանիներ կրաշխէին, իրենք վերապահեցին իրենց գրամն, որպէս զի յետոյ առանձինն թաշխելու և նպատակի մը յատկացնելու միջոցն ունենային, մինչդեռ եթէ անոնց հետ մէկտեղ թաշխած և սպառած ըլլային իրենց նպատները, մասնաւոր ազդեցութիւն մը պիտի չկրնային ընել տեղացիներուն վրայ, Հիմակ որ ամերիկեան և անգլիական թաշխումները դադրած են, հիմակ որ տեղացիներն իրենց քիչ մը պահեստի պաշարն ալ հասցուցած ըլլալով ալ աւելի կարօտ են, Բաղերայք առանձին տէր են նպատակ հրապարակին, և իրենց մասնաւոր զիտումներուն ի կիր կառնուն լոկ մարդասիրական նպատակով իրենց յանձնուած գրամները:

— Նոյն նամակէ կտեղեկանանք նաև որ Դոմինիկեանք նպատակ թաշխումն և դաւանափոխութեան անբաժան գործն այժմ յանձնած են հայհոմէական առաջնորդին, որ տեղացիներուն լեզուն ու բարբը գիտնալով, կարող է աւելի գիւրաւ շահիլ անոնց սիրտերը, Հայհոմէականաց առաջնորդարանի դուռը շարունակ պաշարուած է խումբ խումբ գիւղացիներով ու խեղճ քաղաքացիներով, որք կուգան Հոռմայ Եկեղեցւոյն մէջ մտնելու, պայմանաւ որ իրենց ուտելիք, հագուստ և սերմանելիք տրուին: Գիւղերու մէջ, հոգիւր և կալուածներ թափու կըլլան կաթովիկ հաստատութեանց վրայ, իսկ քաղաքին մէջ, տրուած գրամին կամ նիւթական նպատակն փոխարէն մուրհակ կառնուի՝ ընկալագրի ձեռով, որով հակակշիռ պիտի ըլլայ եղեր թաշխումներուն վրայ: Քիչ շատ ներկայանալի վիճակի մէջ գտնուող քաղաքացիներուն հինգ ոսկիէ մինչև 20 ոսկի ալ կտրուի եղեր, մուրհակ-ընկալագրի փոխարէն, դրամազուլոս ընելու և ապրուստ մը շահելու համար:— Ինչպէս ամէն անգամ, այս անգամ ալ շարժումն զլխաւոր սատարներն ու գործիչներն են Հայեր, Հաս կըննադատուին նախնեան Գրիգոր և Պօղոս անուն անձերն, եղբարք Մարկոս էֆ. նախնեանի, Էսայեան վարժարանի տեսչին, որք իրենց եղբոր հրապարակի վրայ գրածներուն հակառակն ի գործ կընեն Վանայ մէջ, նամակագիրը կ'ընթացնէ հետեւեալ կծու գիտողութեամբ. —

«Ազգ. Պատրիարքարանի հրամանով իբր թէքարողումներ կըլլան եկեղեցիներուն մէջ Պատրիկութեան հոսանքին առաջքն առնելու համար, Սակայն մեր անկարող կղերներ անբան ողորմելի զէնքերով կը կուրին որ ծիծաղելի կըլլան, Հ. Անտոն Զնտոյեանին նման ճարպիկ և ուսեալ Վենետիկցի մը գիմաց, մեր ալ գոնէ կարող գլուխ մը

պետք էր ունենայինք, և ոչ թէ Աղապատեան Ստեփան վարդապետին նման՝ ըրած թողածէն անտեղեակ, անուս, անկարող մէկը, Հիմա ոչ նիւթական, ոչ հոգեւոր միջոցներ ունինք մաքառելու համար։

— Անցեալ տարուան խիստ և երկարաւեւ ձմրան հակառակ, այս տարի մեղմ՝ ձմեռ եղաւ Վանայ մէջ. վերջերս հազիւ ձիւնի ըտրակ խառով մը ծածկուեցաւ երկիրը. Ուրախաւիժ պարագայ մը չէ սակայն ասիկա, վասն զի ձիւնի առատութիւնը այստեղի համար տեսակ մը բարիք է, ըստ որում ցանքեր ծածկուած ըլլալով վնասէ զերծ կը մնան. ասկէ զատ, ձիւնը ջուրի առատութեան ալ կը նպաստէ։

Անցեալ շաբթու Ազգ. Առաջնորդարանի մէջ աղբատաց նպաստամատոյց Յանձնաժողով մը կազմուեցաւ՝ միանալով միսիօնարական Յանձնաժողովին հետ՝ կուսակալի օգնական Յովհաննէս Էֆէնտիին նախագահութեան ներքեւ. Այս երկու յանձնաժողովները համերաշխաբար պիտի աշխատեն. Առաջնորդարանի կողմէ յատուկ ներկայացուցիչ մը կարգուեցաւ միսիօնարական նպաստարաշխ յանձնաժողովին գործառնութեանց մասնակցելու։

Դէպի կաթողիկոսութիւն դաւանափոխական հոսանքը երթալով պակասիլ կը սկսի և կը յուսանք թէ պիտի նմանի գարնանային հեղեղներու, որոնք յարաւ և չեն ըլլար. Քանի մը օր առաջ Վլոր-Դար թաղի ժողովուրդը հանրագրով մը Ազգ. Առաջնորդարանին դիմեց, յայտնելով թէ իրենք պարզապէս խաբուած են քանի մը անձերու թելադրութիւններէն և թէ որչա՞նչ են միահամուռ մայրենի յեկեղեցին վերագառալ։

Դաւանափոխ գիւղերէն ալ հետզհետէ հանրագիրներ կը հասնին, զիջում յայտնելով Ազգ. Առաջնորդարանի պարտքն է սիրաշահիլ այս խեղճերը և լուսաւորել զանոնք իրենց տգիտութեան և յուսախաբութեան մէջ։

— Վանայ Հոգւոց վանքը իր դարաւոր հնութեամբ և նուիրական յիշատակներով, որոնց մէջ կան մասնաւորապէս Տիրամօր պատկեր մը և Ս. Գեղարզի հրաշալի մատուցը, լքուած կը մնար բաւական ժամանակէ ի վեր և իր անշարժ կալուածները՝ ինչպէս ջրաղաց, ընդարձակ արօտափայրի որ վարելահողեր՝ ամայի և ապարդիւն, մաս մըն ալ անհասնելու տրամադրութեան տակ, Այս արգաստելի կացութեան դարման մը հասցնելու համար, Վանայ առաջնորդարանը ինը ամիս առաջ այդ վանքին համար հոգաբարձութիւն մը կազմեց, որ վերջերս իրեն նախագահ և վանահայր ընտրեց Տ. Ներսէս վարդապետ Ըիտանեանը, Հոգաբարձութիւնը մէկ կողմէ աշխատելով վանքին ցրուեալ նըշխարները ամփոփել ու գոյքերը արդիւնաւորել, միւս կողմէ անհրաժեշտ պէտք տեսած է վանքին նորոգման, որպէս զի գիշերօթիկ վարժարան մը կամ

որրանոց մը հաստատուի հոն. Այս մտքը, գրաւորապէս գիտում ըրած է Ս. Պատրիարք Զօր. Խնդրելով որ Ն. Սրբազնութեան հրաւերով մայրաքաղաքիս աղգայիներուն կողմէ նիւթական օգնութիւն մը ըլլայ այդ նպատակով։

— Վայսերական կառավարութիւնը՝ հայրական հոգածութեամբ նկատողութեան առնելով Վանայ հայ կարօտեալներուն վիճակը, այս օրերս 200 ոսկիի նպաստ մը ղրկեք է անոնց, Պետական այս նրպաստին բաշխումը պիտի կատարէ Վանայ մէջ կազմուած Յանձնաժողով մը, նահանգին Վսեմ. կուսակալին նախագահութեամբ։

— Պրոսպի առաջնորդ Արշարունի Տ. Յովհաննէս, Ռոտտութոյի առաջնորդ Այվազեան Տ. Յովսէփ և Վեսարիոյ առաջնորդ Պալեան Տ. Տրդատ Ծ. վարդապետներուն անցագիրները ելած ըլլալով, պիտի օպասեն Ամենայն Հայոց Ս. Հայրապետին Խիփլիզէն Էջմիածին վերագառնալուն, որպէս զի նպիսկոպոս ձեռնադրուելու համար ճամբայ ելլեն դէպի Էջմիածին։

— Փրնուզի և Ալպիսթանի ազգ. հոգեւոր իշխանութիւնք աղգայնոց նիւթական խեղճ ու անկարող վիճակը նկարագրելով նպաստ կիսնդրեն, Մաւաւանդ Ալպիսթանցիք իրենց վարժարանին համար դասագիրք և այլ դպրոցական պիտոյք կիսնդրեն, աշակերտաց թիւն է 80։

— Խարբերդ գտնուող Տրդ. Պրօքս գերման Բասդէօնը 100 ոսկիի նպաստ մ'ըրեր է Խարբերդի մերձակայ հայարնակ գիւղերու կարօտելոց մէկ մասին։

— Սուճի Պօղոս աղայի համար կրսուի թէ իր բոլոր գոյքը (100—200 լիւրայի չափ պէտք է ըլլայ) կտակեր է Ազգ. Հիւանդանոցին, Արովհետեւ հարուստի կտակ մը չէ այս, հաւանական է որ լուրը ճիշտ ըլլայ։

— Վրօնական Ժողովը իր վերջին նիստին մէջ նկատողութեան առնելով որ գաւառներու մէջ մէկ երկու տեղեր առաջնորդներուն կողմէ թոյլտուութիւն կըլլայ օտար եկեղեցականներուն՝ հայ եկեղեցիներուն մէջ պաշտօն կատարել և քարոզ խօսիլ, որոշեց ընդհանուր շրջաբերականով մը բոլոր առաջնորդներուն և առաջն. Տեղապահներուն ծանուցանել թէ, հայ եկեղեցիի արարողութեան ներկայ գտնուող օտարադաւան եկեղեցականները չեն կրնար արարողութեան մասնակցիլ և քարոզ խօսիլ, և եթէ այս հրամանը նկատողութեան չառնողներ գտնուին, խստիւ պատասխանատու պիտի մնան Ազգ. Պատրիարքարանի առջև։

— Ս. Պատրիարք Հայրը պաշտօնագիր մը ուղղելով Վանայ առաջնորդական տեղապահ Տ. Ներսէս եպիսկոպոս Աշխենեանին, և հաղորդելով անոր պաշտօնին վերաբերեալ Վայս. հրովարտակին Պատրիարքարան յանձնուած ըլլալը, յանձնարարեց Ն.

Գերապատուութեան՝ փութով ճամբայ ելլել իր պաշտօնատեղին ուղեւորելու համար:

—Աղթամարայ վանքին մէջ հաստատուած որբանոցը, տարւոյս սկիզբէն, Մոսկուայ ընտելոյ բարեգործ ազգայնի մը պաշտպանութեան ներքեւ զբոսած է: Եւ որ ամսական 12 1/2 օսմ՝ ոսկի սահմանած է անոր ծախքերուն համար:

—Երեք տարի Առաջ Տ. Յարութիւն Ս. Պատրիարք Հայր իր անձնական ծախքով գրադարաններ շինել տալով Երուսաղէմի Վանուց Ս. Թորոս եկեղեցւոյն մէջ, հոն փոխադրել տուաւ Ս. Աթոռոյն 2,000ի մօտ գրչագիր մատենաներն, որոց այժմ ընդարձակ ցուցակը կ'պատրաստէ լուսարարապետ և գրապետ Տ. Սահակ եպիսկ. Խապայեան: Գովելի նպատակաւ այս միջոցին ալ յիշեալ եկեղեցւոյն կից երկու պատմական սենեակներ միացուելով գրատան վերածուեցան, ուր պիտի փոխադրուին բոլոր տպագրեալ գրքեր, և հաւանականաբար Զատեկական Տօներէն յետոյ մեր գրատուններն որոշեալ ժամերուն կանոնաւորապէս պիտի բացուին Միարանութեան առջեւ, ուր մեր ուսումնատենչ եղբայրակիցներն յաճախելով՝ գրապետ Սրբազանի կամ իւր օգնականին հսկողութեան տակ հետամուտ պիտի լինին իրենց մտաւորական զարգացման: —Այս առթիւ յիշեմք թէ Ս. քաղաքիս Քրանչիակեան, Դոմինիկեան և Օգոստինեան միարանութեանց ճոխ գրատունները ոչ թէ միայն իրենց միարանակիցներուն, այլ և օտարաց առջեւ բաց են որոշեալ ժամերուն, միայն թէ այս վերջիներուն ներքի չէ գրատունէն գիրք դուրս հանել:

ՈՌԻՄԱՆԻՈՅ ՀԱՅԳ.

Եւրոպիոյ Հայոց հովիւ Գեր. Գեորգ եպիսկոպոսի շրջաբերական թուղթը

ԱՌ. ԵՐԺ. ԵՐԻՅՈՒՆՍ, ՊԵՏ. ՀՈԳԵԲԵՐԶՈՒԹԻՒՆԸՍ Է՛Ի ԵԶՆԻԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՍ ՀԱՅՈՅ ՌՕՄԵՆԻՈՅ.

Վեհափառ Հայրապետն Ազգիս Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Սրբազնազոյն Կաթուղիկոսն ամենայն Հայոց, փափաղելով որ Եւրոպիոյ մէջ ցրուեալ իւր հօտն ունենայ մի եպիսկոպոս՝ հրաւիրեց զմեզ Մարտէլլից ի Ս. Էջմիածին և իւր Բարձր վատահութեան արժանի համարելով զմեզ, ձեռնադրեց եպիսկոպոս ի վերայ հայոց Եւրոպիոյ, ի թիւս որոց համարելով նաև

գիտմանահայս՝ իւրեանց միջալայրի և այլ յարմարութեամբք:

Իրաւ է թէ Կ. Պօլսոյ Ազգ. Պատրիարքարանի կողմէ 10—20 տարին մի անգամ Եպիսկոպոս մը կայցելէր ի Ռօմանիա և կանցնէր, կերթար, բայց Վեհ. Հայրիկն ուղեւով աւելի օգտակար ընել Ռօմանահայոցը համար հօվուական այս զրութիւնը՝ հրամայեց որ նախ Աւստրօ—Հունգարիայէն և Ռօմանիայէն սկսեմք մեր այցելութիւններն և այսուհետեւ ալ մէկ կամ երկու տարին անգամ մը այցելեմք և Պատ. Հոգարարձութեանց հետ համերաշխ սիրով աշխատեմք ի փառս ս. Եկեղեցւոյ:

Ուստի Փարիզի Օսմանեան դեսպանատունէն մեզ տրուած անցագրին վրայ կատարուելով ամեն օրինական գործողութիւնք՝ մտանք ի Ռօմանիա և Պօթժուանի ու Եաշի եկեղեցեաց մէջ մօրթարեցինք մեր բարեպաշտ Ժողովուրդը և օրհնութիւններ կարդացինք Ռօմանիոյ թագաւորութեան և Ժողովրդեան համար:

Այն ինչ պատրաստուած էինք Եաշէն անցնիլ ի Ռօման՝ ահա յանկարծ արգելուեցանք և ստիպուեցանք դառնալ ի Սուչաւա: Այս յանկարծական արգելքին պատճառն Ռօմանալու համար դիմեցինք Պուրբէշթի նշառաւոր ազգայնոց Եաշի, Փօքշանի, Պօթժուանի և Ռօմանի Պատ. Հոգարարձութեանց, որոց, ինչպէս և Սուչովի Պատ. Հոգարարձութեան այս առթիւ նուիրած ջանից համար կը պարտեմք խորին շնորհակալութիւններ:

Հակառակ պատուաւոր միջնորդութեանց՝ մեծ եղաւ մեր ցաւն, երբ լսեցինք թէ Պուրբէշթի Տէր Նախարարապետն ընդգիմացած է, ըսելով թէ մեր մասին գէշ տեղեկութիւններ հասած են իրեն:

Մենք մեր քսանհահեղամեայ այլ և այլ նշանաւոր պաշտօնավորութեանց մէջ կառկածելի՛ որ և իցէ մի ընթացք երբեք չեմք ունեցած, հետեւաբար Տէր Նախարարապետի հասած այդ գէշ տեղեկութիւնք բացարձակ արդիւնք են սուտ զրպարտութեան:

Արդարեւ իբրեւ ամենատրուպն աշակերտաց Բրիտանի՛ այս ծանր նախատանաց գեմ լծդէ ևս որպէս խուլ՝ զի ոչ լսէ, որպէս